իւրեանց և զկործանումն վանայ Ս. Յակոբայ. իսկ դենդէտն գթացեալ յարտասուս նոցա, գրեալ ծանոյց զամենայն անցս Հայոց 'ի Դուռն Արքայի, թէ յ՚ոպիսի նեղութիւնս և 'ի տառապանս անկաւ վանք Ս. Յակոբայ, և թէ քանի՞ չարիք գործեցան աստ յաւուրց անտի, յորում 'ի մի ճուլեցան Պատրիարքութիւնք երկուց Աթոռոց. բազմացան տոկոսաւոր պարտք, և կալուածք եդան 'ի գրաւի. միաբանք սակաւք՝ հեծեն 'ի չքաւորութեան. անօթք եկեղեցւոյ յոսկւոյ և արծաթոյ յափշտակեցան 'ի տեղակալաց։ Արդ՝ եթէ ոչ բաժանեսցի ասէ՝ Պատրիարքութիւնն Երուսաղէմի 'ի Պատրիարքութենէ թագաւորական քաղաքին, չիք հնար ազատութեան, զի յաւուրց անտի Սէլիմայ Արքայի ունէին Հայք առանձին Պատրիարքութիւն Յերուսաղէմ, եւ չէր հնար ումեք ձեռնամուխ լինիլ 'ի գործս նոցա։ Իսկ այժմ խախտեցան համօրէն կարգ եւ օրէնք վանայ, եւ մօտալուտ կործանումն նորա հասեալ կայ 'ի դուռս. միաբանք կան 'ի տարակուսի, ակնկալեալ այցելութեան Տեառն։ Սակայն այս գիր դենդէտին ոչ ինչ ազդեցութիւն գործեաց 'ի թագաւորական քաղաքին, այլ ընդ հակառակն առաւել բազմացան եւ ամեցին անկարգութիւնք Յերուսաղէմ, մինչեւ յաւուրս Յովհաննու եւ Գրիգորի վարդապետաց։

Ի սմին ժամանակի յարեաւ վէճ 'ի մէջ Յունաց և Լատինաց սակս առաջնութեան. զի Նէոփիտոս փոխանորդն Երիսաղէթոս Պատրիարքին Յունաց, դժկամակ իմն էր ընդ առաջնութիւն Լատինաց, եւ երկնէր 'ի միտս իւր յափշտակել զայն 'ի ձեռաց նոցա, ուստի ամբաստան եղեւ զփոխանորդէն Լատինաց առ դատաւորն, և կոչեցան 'ի դատաստան փոխանորդք եւ թարգմանք երկաքանչիւր ազգաց։ Ռափայել Լատին փոխանորդն ասէ՝ տաճարն Ս. Յարութեան, եւ փականք երից դրանց եկեղեցւոյն Բեթղեհէմի են 'ի ձեռս Լատինաց յամենայն ուխտատեղիս. և 'ի սահմանեալ Կայսերական տուրս, միշտ առաջնութիւնն է Լատինաց, և փոխանորդ նոցին նախագահ բազմի յամենայն ժողովս. իբրեւ հարցաւ 'ի փոխանորդէն Յունաց, նա ոչ երբէք ընկալաւ զայն, եւ խնդրէր իսկ խափանել զխորհուրդս նորա։ Կրկնեաց Ռափայել և ասէ՝ զի որպէս